«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝

«Սովորողների միջև համագործակցային կարողությունների ձևավորումը առարկայի դասավանդման գործընթացում»

Հետազոտող ուսուցիչ՝ Մանուկյան Երանուհի

Զրաշենի միջնակարգ դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Միերյան Գայանե

ԱՐՄԱՎԻՐ 2023

Բովանդակություն

Ներածություն ----------3

Գրականության ակնարկ----------5

Գործնական համատեքստ----------9

Եզրակացություն----------15

Օգտագործված գրականության ցանկ----------16

Ներածություն

Կրթության կազմակերպման խնդիրներից են կրթական համայնքի ստեղծումը, սոցիալապես ակտիվ, ինքնակազմակերպվող խմբի համակեցությունը: Այդ խնդիրների լուծման լավագույն ճանապարհը խմբային աշխատանքն է, որտեղ դրսևորվում են խմբի անդամների անհատական առանձնահատկությունները, միաժամանակ ձևավորվում են խմբի անդամին հատուկ կարողություններ՝ համագործակցելու, դիմացինին լսելու, հարգելու, ապրումակցելու:

Դասավանդողը ինքը պիտի տիրապետի այդ կարողություններին, դառնա խմբի անդամներից մեկը, իր սաների հետ ստեղծի սոցիալական այնպիսի միջավայր, որ հետաքրքրի սովորողներին և խթանի նրանց ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը, հետազոտելու ու ստեղծագործելու կարողությունը: Խմբային աշխատանքն ավելի արդյունավետ է դարձնում ուսուցման գործընթացը: Լավ կազմակերպված խմբային աշխատանքը մեծապես ազդում է սովորողների անհատականության և արժեքային համակարգի ձևավորման վրա: Խմբային աշխատանքը խթանում է սովորողների՝

- համատեղ մտավոր աշխատանքը, որի ժամանակ քննարկումները դառնում են ուսուցման միջոց,
- կամքի ուժը՝ միասին ընդունած կանոններն ու որոշումները հարգելու համար,
- համագործակցությունը,
- փաստարկներ բերելու, դրանք մեկնաբանելու, հիմնավորելու ունակությունը,
- այլոց նկատմամբ հարգանքը,
- խմբի մաս լինելու գիտակցումը և խմբի համար պատասխանատվությունը:

Տվյալ հետազոտական աշխատանքի թեմայի արդիականությունը և հիմնավորվածությունը կայանում է նրանում, որ ներկայումս խմբային աշխատանքի կարևորությունը դասապրոցեսում կարևորվում է առավել վճռական կերպով՝ կապված այդպիսի աշխատանքի ցուցաբերած արդյունավետության հետ: Սակայն կարևոր է, որպեսզի այդպիսի աշխատանքը լինի ճիշտ կազմակերպված, համապատասխանի աշակերտների կարողություններին և գիտելիքներին, ուղղված լինի թույլ կամ միջին առաջադիմությամբ աշակերտների ներգրավվածության

ապահովմանը, այլ ոչ թե նրանց «ճնշմանը» առավել ակտիվ և բարձր առաջադիմությամբ աշակերտների կողմից: Ինչպես նաև խմբային քննարկման ուսումնասիրությունը մեզ թույլ կտա հասկանալ, թե ինչպես է այն ազդում աշակերտների սոցիալական ներգրավվածության և ակտիվության զարգացման վրա, ինչը հանդիսանում կրթական ամբողջ գործընթացի կարևոր խնդիրներից մեկը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել, թե խմբային քննարկումների ինչպիսի՞ հնարներ կարելի է կիրառել կենսաբանության դասաժամերին: Ըստ այդմ, հետազոտական աշխատանքի խնդիրբները հետևյալն են.

1. Ուսումնասիրել խմբային քննարկումների էությունը և դրանց առանձնահատկությունները դասապրոցեսում;
2. Առանձնացնել խմբային քննարկումների և աշխատանքների կազմակերպման փուլերը դասապրոցեսում;
3. Ցույց տալ խմբային աշխատանքների և քննարկումների արդյունավետությունը աշակերտների ակտիվության և սոցիալական ներգրավվածության, ինչպես նաև լեզվամտածողության զարգացման վրա:
4. Բարձրացնել աշակերտների ակտիվությունը և ներգրավվածությունը դասապրոցեսում:

Խիստ կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը: Ուսուցիչներից շատերն են դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանքը, սակայն քչերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն: Հենց այդ պատճառով, համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում դասարանում, և դպրոցում կիրառվող փոքր խմբերով աշխատանքներն ավելի շատ խմբային աշխատանքներ են, քան համագործակցային ուսուցում:

Գրականության ակնարկ

Երեխայի ուսուցման նպատակն է
նրան ընդունակ դարձնել հետագայում
զարգանալու առանց ուսուցչի օգնության։
ԷԼԲԵՐԹ ՀԱԲԱՐԴ

Համագործակցային (խմբային) ուսուցման հիմքում ընկած է թիմային աշխատանքը, երբ աշակերտները ռեսուրս են հանդիսանում մեկը մյուսի համար: Ուսուցման այս ձևը ապահովում է համագործակցություն, ինքնուրույնություն և խմբային գործունեություն: Ոսուցիչը կարող է զարգացնել սովորողների միջև համագործակցություն `ստեղծելով այնպիսի ուսումնական միջավայր, որտեղ բոլոր աշակերտները կընդունեն խմբի ընդհանուր նպատակը և կգիտակցեն, որ խմբի յուրաքանչյուր անդամի հաջողությունն իրենց առավելությունն է:

Բոլորը պետք է ստանան առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ նյութեր, պետք է ունենան իրենց դերը, որն էլ իր հերթին կնպաստի աշխատանքի բաժանմանը. օրինակ՝ աշակերտներից մեկը կարող է խմբի առաջնորդ լինել, մյուսը կարող է գրանցել մտքերը, իսկ երրորդն էլ կարող է հանդես գալ որպես խմբի խոսնակ: Խմբային աշխատանքների ժամանակ երեխաները կարող են միասին գրել, իրար փոխանցել գրավոր աշխատանքները, փոխանակել կարծիքներ:

Խմբային աշխատանքները շատ արդյունավետ են տարրական դասարաններում: Գիտնականները գտնում են, որ սա լավագույն միջոցներից է՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսումնական գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար: Նման հնարավորությունը շատ կարևոր է այս երեխաների համար, քանզի նպատակ ունենալով սովորեցնելու նախօրոք պլանավորած ուսումնական նյութը՝ խմբային աշխատանքն օգնում է ձեռք բերելու դրական փորձ՝ համադասարանցիների հետ շփվելու և մյուսներին օգնելու համար:

Աշակերտներին խմբավորելիս շատ կարևոր է հստակ բացատրել, թե ինչ է իրենցից պահանջվում, և որոնք են խմբային աշխատանքի հիմնական պահանջները:

Ուսուցիչը ևս կարող է մասնակցել այս աշխատանքներին և ուղղորդել, որ խմբի անդամներն օգնեն մեկը մյուսին, սա առանցքային միջամտություն է, քանի որ երբ աշակերտները սովորում են աշխատել խմբով, նրանք կարող են թիմային առաջընթաց ցուցաբերել՝ նույնիսկ առանց ուսուցչի օգնության:

Ուսուցում ընկերոջ հետ տեխնիկան կիրառվում է, երբ աշակերտներից մեկը, ով արդեն սովորել է և տիրապետում է ուսումնական նյութին, սովորեցնում է մեկ այլ աշակերտի: Ուսուցման այս ձևն ուղեկցվում է ուսուցչի վերահսկմամբ, ով նախօրոք պլանավորում է առաջադրանքը և ներկայացնում զույգին: Սովորեցնողի դերում հանդես եկող աշակերտն օգնում է ընկերոջը և հետադարձ կապ ապահովում:

«Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար» [Խաչատրյան Ս.Գ. Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006, էջ 18]:

Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել բազմաթիվ երկրների ուսուցիչների և ուսուցիչների պատրաստում և վերապատրաստում իրականացնողների կողմից: Դրա լայն տարածմանը նպաստող գործոններից են՝

- դասարաններում ուսուցումը սովորողի անհատական առանձնահատկություններին հարմարեցնելը,
- բազմակողմանի կրթական նպատակներին միաժամանակ հասնելու հնարավորությունը,
- ուսուցման առանձնահատկություններին, ժամանակակից մոտեցումներին համահունչ լինելը:

Համագործակցային ուսուցման տարրերն հիմնականում հինգն են.

- դրական փոխկախվածություն,
- դեմ առ դեմ փոխազդեցություն,
- անհատական հաշվետվություն և պատասխանատվություն,
- միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ,

- խմբային գործընթացի մշակում [Հովհաննիսյան Գ., Զոհրաբյան Ա., Արնաուդյան Ա., Գրիգորյան Ք.,Դավթյան Մ., Օհանովա Ի., Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ,. 2004, էջ 45-47]:

Խմբային աշխատանքի արդյունավետությունը կախված է մեթոդապես ճիշտ տարվող գործունեությունից: Ուսուցիչը պետք է հաշվի նստի աշակերտների ինքնուրույն կարծիքների, կայացրած որոշումների, միմյանց հետ ազատորեն հաղորդակցվելու իրավունքների հետ» [Խաչատրյան Ս.Գ. Աշակերտների ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքի ձևերը մայրենիի ժամերին /համագործակցային ուսուցում/, «Նախաշավիղ», 1. 2003, Երևան, «Տիգրան Մեծ», էջ 17-24]:

Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին հասկանալու էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման և արժևորման համար: «Ուրիշների հետ աշխատելու և համագործակցային ստեղծագործական աշխատանքից առավելագույնս օգուտ քաղելու էական պայմաններից մեկն ուրիշի տեղում իրեն պատկերացնելու կարողությունն է, քանի որ դիմացինի տեսակետի ըմբռնումն աշակերտներին հնարավորություն է տալիս ավելի հեշտությամբ հարմարվելու կյանքի պահանջներին» [Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ.,Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան, «Անտարես» հրատ., 2006, էջ 145]:

Խմբային քննարկումների ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանն ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտի միջոցով: Համագործակցային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթացի մշակմամբ հմուտ համագործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ ձևավորելը: Համագործակցությունն ստեղծում է ինքնաճանաչման ավելի բարձր մակարդակ, քան կարող են ապահովել մրցակցային կամ անհատական ուսուցման եղանակները: Համագործակցային իրավիճակներում անհատները միտված են փոխներգործելու, նպաստելու միմյանց հաջողությանը,

ձևավորելու հետաքրքրությունների լայն շրջանակ և կազմելու միմյանց կարողությունների մասին իրական պատկերացումներ, հետևաբար տալիս են ճշմարիտ հետադարձ կապ:

Ուսուցչի դերը համագործակցային ուսուցման մեջ բավականին մեծ և նշանակալի է: «Ուսուցչի գործը հասարակության շրջանում ամենից կարևորվող, ամենամեծ հնարամտություն պահանջող, օրեցօր ավելի գնահատվող մասնագիտություններից է: Այսօր հաջողության հասնելու համար ուսուցիչներին հարկավոր են երեխաներին կառավարելու և օգնելու նոր եղանակներ, նաև՝ երեխաների արդյունավետ ուսուցման համար անհրաժեշտ մոտեցումների խոր ընկալում» [Վարդումյան Ս., Ջաղինյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, «Նոյյան տապան» հրատ., 2005, էջ 48]:

Ուսուցումը սովորողի ներսում տեղի ունեցող բարդ գործընթաց է: Ուսուցիչն այն կարող է միայն ուղղորդել, ստեղծել դրա համար նպաստավոր միջավայր, աջակցել և մտածելու հնարավորություն ընձեռել: Համագործակցային մեթոդներն ակնկալում են ուսուցչի դերի փոփոխություն, և այդ դերը լի է մարտահրավերներով: Համագործակցային ուսուցում կիրառող ուսուցիչը պետք է լինի համբերատար խմբի անդամներին ուղղորդելու համար: Խմբերին անհրաժեշտ է բավական ժամանակ միմյանց հետ ազատ և հարմարավետ զգալու համար: Ինչպես ավանդական, այնպես էլ համագործակցային ուսուցման դեպքում հաջողության առանցքը ուսուցչի նախապատրաստությունն է: Ուսուցիչը պետք է պլանավորի ոչ միայն բովանդակության մոտեցումը, այլ նաև աշակերտների գործողությունները և գնահատումը:

Խմբային աշխատանքների կազմակերպումը և իրականացումը դպրոցում ներկայումս զբաղեցնում է իր առանցքային դիրքը դասապրոցեսի կազմակերպման ողջ համակարգում: Այդպիսի աշխատանքներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար:

Բացի այդ՝ խմբային ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի: Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է: Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել:

Խմբային աշխատանքի խոցելի կողմերից մեկն էլ այն է, որ առանձին աշակերտներ «թաքնվում են» խմբի հետևում: Նման իրավիճակում ուսուցիչները կարող են կիրառել «ես-դու մենք» հնարը: Յուրաքանչյուր աշակերտի առաջարկեք խմբային աշխատանքի վերջում ներկայացնել սեփական ներդրումը խմբի աշխատանքում, խմբի մյուս անդամների ներդրումը և ընդհանուր խմբի աշխատանքի որակը:

Շատ զգույշ պետք է վարվել խմբային աշխատանքներ կազմակերպելիս: Շատ տարածված իրողություն է,

- որ խմբում մեկն իր վրա է վերցնում ողջ աշխատանքը՝ կարդում է նյութը, պարտադրում է իր կարծիքը, գրում է, նկարում է, և մյուսները մնում են ստվերում,
- աշխատանքը ժամանակի առումով չի վերահսկվում և կարող է ժամանակին չավարտվել,
- ուսուցիչը չի ուղղորդում խմբի ներսում կատարվող աշխատանքը, այն երբեմն շեղվում է նպատակից կամ բոլորովին հասկացված չի լինում,
- խմբի ներսում հստակ չեն բաժանվում պարտականությունները,
- սենյակում լսվող ոչ գրադարանային ձայնը խանգարում է աշխատել:

Հետազոտության ընթացք

Կենսաբանության դասերին խմբային աշխատանքների հաջող իրականացումը կախված է մի քանի պայմանների պարտադիր իրագործումից, որոնք ապահովում են ուսումնառության գործընթացի հաջող իրականացումը՝ խմբային աշխատանքի ներդրման տեսանկյունից: Այդպիսի պայմաններից է.

- ✓ Սովորողների անձնային հատկությունների ուսումնասիրություն և տիպային խմբերի ձևավորում ըստ այդպիսի առանձնահատկություններն հաշվի առնելու;
- ✓ Տիպային խմբերի գործունեության կազմակերպում՝ կիրառելով ուսումնառության ընտրված մեթոդները, որոնք նպատակահարմար են կենսաբանության դասերին:

Աշակերտների անհատական առանձնահատկությունների ուսումնասիրության և դրանց հիման վրա տիպային խմբերի ձևավորման համար հաշվի են առնվում այնպիսի չափանիշներ, ինչպիսիք են նրանց իրական ուսումնական հնարավորությունները և առաջընթացը, ակտիվության աստիճանը, հետաքրքրությունը կենսաբանություն առարկայի նկատմամբ: Համագործակցային աշխատանքի կազմակերպման հանդեպ այսպիսի մոտեցումը առավելագույնս համապատասխանում է ժամանակակից մանկավարժական հայացքներին և դպրոցի խնդիրներին:

Ժամանակակից դպրոցական ուսուցման մակարդակն առանձնանում է նրանով, որ թույլ է տալիս դասարանային պայմաններում լայնորեն կիրառել խմբային աշխատանքի բազմազան տեսակներ և հնարներ, այդ թվում ներդասարանային, արտադասարանային և այլն:

Իմ մանկավարժական գործունեության ընթացքում ես հաճախ եմ կիրառում համագործակցային ուսուցման մեթոդները, քանի որ դրանք օգնում են առավել արդյունավետ կերպով կազմակերպել ուսումնական գործընթացը և հասնել դասի հիմնական նպատակներին: Ընդ որում, վերջիններիս թվին են դասվում ոչ միայն ուսումնական նյութի մատչելի մատուցումը և դրա առավելագույնս յուրացումը աշակերտների կողմից, այլև աշակերտների հաղորդակցական կարողությունների, թիմում աշխատելու հմտությունների և այլ աշակերտների հետ արդյունավետ կերպով համագործակցելու կարողությունների զարգացումը:

Կենսաբանության դասաժամերին համագործակցային հմտությունների ձևավորման համար առավել հաճակ կիրառում եմ ինչպես խմբային, այնպես էլ միջխմբային համագործակցության մեթոդները: Այդպիսի աշխատանքը թույլ է տալիս իրագործել համագործակցության հիմնական սկզբունքները՝ ընդհանուր նպատակի

ընկալումն աշակերտների կողմից, խմբի ներսում գործառույթների և պարտականությունների նպատակահարմար բաշխումը, փոխադարձ վերահսկողությունը և խմբի անդամների համատեղ աշխատանքը:

Կենսաբանության դասերին խմբային աշխատանքի կազմակերպման հիմնական առանձնահատկությունները կայանում են հետևյալում.

- ✓ Տվյալ դասաժամին դասարանը բաժանվում է խմբերի՝ կոնկրետ ուսումնական խնդիրների լուծման համար;
- ✓ Յուրաքանչյուր խումբ ստանում է հստակ առաջադրանք և կատարում է այն խմբի ներսում համագործակցության միջոցով;
- ✓ Առաջադրանքները խմբի ներսում կատարվում են այնպես, որպեսզի հաշվի առնվեն և գնահատվեն խմբի յուրաքանչյուր անդամի ներդրումը և ընդհանուր խմբային աշխատանքի արդյունքը;
- ✓ Խումբը ձևավորվում է այնպես, որպեսզի հաշվի առնվի յուրաքանչյուր աշակերտի ուսումնական և անհատական առանձնահատկությունները և որպեսզի նրանք կարողանան լիարժեք կերպով իրագործել սեփական կարողությունները՝ կախված առաջադրանքի բարդությունից:

Առաջադրանքները կամ ուսումնական խնդիրները, որոնք դրվում են խմբի առջև համագործակցային մեթոդի կիրառության ժամանակ, կարող են լինել միևնույնը բոլոր խմբերի համար, կամ էլ կարող են տարբեր լինել յուրաքանչյուր խմբի համար: Խմբային աշխատանքի ընթացքում խրախուսվում է խմբային քննարկումների իրականացումը՝ ինչպես խմբի անդամների միջև, այնպես էլ խմբի և ուսուցչի միջև:

Խմբային աշխատանքը թույլ է տալիս արձանագրել համեմատաբար բարձր առաջադիմություն ունեցող աշակերտների, ովքեր լավ էն պատրաստվել և, կարծես, անհատական աշխատանք կատարելով, հասել էն իրենց ցանկալի արդյունքի: Սակայն, միաժամանակ, այդ խմբերրից կարող են դուրս մնալ մյուս անդամները, ովքեր որևէ խթան չունեն՝ ամբողջ պատասխանատվությունը թողնելով ակտիվ աշակերտների վրա:

Այսպիսով, խմբային աշխատանքի ընթացքում աշակերտների մի մասը անտարբեր են լինում, մյուսները փորձում են մասնակցել քննարկմանը, պատասխանել ուսուցչի հարցադրումներին:

Անդրադառնանք նաև խմբային աշխատանքի իրականացման փուլերին: Այդ գործընթացը բաղկացած է հետևյալ բաղադրիչ տարրերից կամ փուլերից.

1. Խմբային առաջադրանքի ձևավորում և նախապատրաստական աշխատանքներ.

- ✓ Խմբերի ձևավորում և կազմավորում;
- ✓ Ուսուցչի կողմից ուսումնական խնդրի սահմանում;
- ✓ Խմբերին համապատասխան հանձնարարությունների ձևավորում;
- ✓ Դիդակտիկ նյութերի կամ այլ անհրաժեշտ պարագաների տրամադրում խմբերին:

2. Խմբային աշխատանքի իրականացում.

- ✓ Ծանոթություն առաջադրանքին և նյութին;
- ✓ Առաջադրանքի անհատական մեկնաբանություն խմբի բոլոր անհատների կողմից;
- ✓ Խմբային քննարկում, լուծումների առաջարկում;
- ✓ Արդյունքների ամփոփում:

3. Ավարտական փուլ.

- ✓ Խմբային աշխատանքի արդյունքների ներկայացում;
- ✓ Քննարկում ուսուցչի և մյուս խմբերի հետ;
- ✓ Ընդհանուր ամփոփում՝ առաջադրված ուսումնական խնդրի իրագործման վերաբերյալ:

Այսպես, խմբային աշխատանքը՝ հիմնվելով համագործակցության սկզբունքի վրա, թույլ է տալիս լուծել մի շարք կարևոր ուսումնական խնդիրներ, որոնք վերաբերում են ոչ միայն ուսումնական նյութի յուրացմանը, այլև աշակերտների միջև ակտիվ քննարկումների, համագործակցության ծավալմանը: Այսպես ձևավորվում են ոչ միայն ուսումնական և կրթական նշանակություն ունեցող հմտություններ, այլև անձնային և անհատական կարողություններ, որոնք ևս կարևոր նշանակություն ունեն անձի ձևավորման գործում:

Ուսումնական նկատառումներից ելնելով կարող ենք փաստել, որ համագործակցային մեթոդը արդյունավետ կիրառություն կարող է ունենալ ուսումնական գործընթացի տարբեր փուլերում՝ թեմայի ծանոթության, ամրապնդման, կրկնության, ամփոփման և այլն:

Համագործակցային մեթոդը թույլ է տալիս յուրաքանչյուր աշակերտի զգալ իրեն թիմի լիարժեք անդամ, ավելի վստահ զգալ իրեն և ակտիվություն ցուցաբերել դասապրոցեսում:

Եվ վերջում անդրադառնանք խմբային, համագործակցային աշխատանքների կազմակերպման մի քանի հիմնական ձևերի նկարագրությանը, որոնք ըստ իս, առավել արդյունավետ են, որպես խմբային ուսուցման մեթոդ և թույլ են տալիս նպատակաուղղված կերպով հասնել ուսումնական նպատակների իրագործմանը հատկապՃես կենսաբանության դասաժամերին.

1. *Խմբային քննարկում:* Քննարկումը համագործակցային մեթոդների բազային, հիմնարար մեթոդներից է, որը թույլ է տալիս ուսուցչին յուրաքանչյուր աշակերտի ներգրավել դասապրոցեսի մեջ, ապահովել նրանց ակտիվ մասնակցությունը որևէ թեմայի կամ հարցի ուսումնասիրությանը:

Յուրաքանչյուր քննարկում անցնում է 3 փուլով՝ կողմնորոշում, գնահատում, համախմբում: Կողմնորոշման փուլը ենթադրում է մասնակիցների հարմարվողականությունը միմյանց, խնդրին, ինչը հնարավորություն է տալիս ձևակերպել խնդիրը, նպատակները, սահմանել կանոններ: Գնահատման փուլում մասնակիցները տալիս են առաջացած հարցերի պատասխանները, հավաքում գաղափարներ, առաջարկություններ: Համախմբման փուլը բաղկացած է քննարկումների, արդյունքների վերլուծությունից, որոշումների համատեղ ձևակերպմամբ:

2. *Կլոր սեղանի մեթոդ*: Այս մեթոդը նույնպես կիրառվում է որպես որևէ հարցի քննարկման միջոց: Կլոր սեղանի մեթոդի հիմնական մասը կազմում է դիսկուսիան, բանավեճը, երբ որևէ հարց կամ թեմա ենթարկվում է կոլեկտիվ քննարկման, կլոր սեղանի յուրաքանչյուր մասնակից իր սեփական կարծիքն է հայտնում հարցի շուրջ,

տեղի է ունենում կարծիքների համեմատում և վերլուծություն: Մասնակիցները կարող են լրացնել միմյանց կամ հակասել մեկը մյուսին:

Մեթոդի առանձնահատկություններն են՝

- Բոլոր մասնակիցները պետք է կարծիք հայտնեն և ձգտեն, որ իրենց հասկանան;
- Բոլոր մասնակիցները հավասարազոր են, ոչ ոք իրավունք չունի թելադրել իր կամքը և կարծիքը:

«Կլոր սեղանի» առանձնահատկությունը այն է, որ իսկապես քննարկումը պետք է իրականացվի մեկ ընդհանուր սեղանի շուրջ, այսինքն մասնակիցների շփումը պետք է լինի «աչք աչքի», ինչը բերում է ակտիվության մեծացմանը: Մեթոդը թույլ է տալիս ամրապնդել ավելի վաղ ձեռք բերված գիտելիքները և լրացնել բաց թողնված տեղեկատվությունը: Գիտելիքների փոխանակման հետ մեկտեղ աշակերտները սովորում են արտահայտել իրենց մտքերը, գաղափարները: Սովորում են հիմնավորել և պաշտպանել համոզմունքները:

3. *ՈՒղեղների գրոհ (մտագրոհ)*: Մասնակիցներին առաջարկվում է տալ առաջադրված խնդրին, հարցին հնարավորինս շատ լուծումներ, պատասխաններ, անգամ ամենաֆանտաստիկ, անհավանական: Որից հետո բոլոր կարծիքներից ընտրվում են ամենահաջողվածները, որոնք կարող են կիրառվել գործնականում: Մեթոդը էֆեկտիվ է այնպիսի խնդիրների դեպքում, որոնք չունեն միանշանակ լուծում ու պահանջվում են ոչ ավանդական լուծումներ:

4. *Գործնական խաղ*: Խաղային իմիտացիոն ուսուցման մեթոդներից է: Այս մեթոդը թույլ է տալիս վերարտադրել կոնկրետ իրավիճակներ: Այն պահանջում է աշակերտներից պատրաստվածություն և կոլեկտիվ աշխատելու կարողություն: Յուրաքանչյուրը լուծում է իր ֆունկցիաներին և դերակատարությանը համապատասխան խնդիրը: Գործնական խաղը սովորեցնում է համագործակցման հմտությունների: ՈՒսուցման պրոցեսը առավելագույնս նմանեցվում է իրական գործնեությանը: Ստացված տեսական գիտելիքները փոխանցվում են գործնականի:

5. *Դերային խաղ*: Այս մեթոդը ենթադրում է, որ աշակերտներին առաջարկվում է մի իրավիճակ, և նրանք հանդիսանույմ են այդ իրավիճակի ակտիվ մասնակիցները՝ կատարելով այս կամ այն դերը տվյալ իրավիճակի շրջանակներում: Յուրաքանչյուր

աշակերտ իր դերակատարության ընթացքում կարողանում է ոչ միայն յուրացնել մատուցված գիտելիքները, այլև զարգացնել հաղորդակցական կարողությունները: Միևնույն ժամանակ, դերային խաղի կազմակերպման ժամանակ կարևոր է, որպեսզի ուսուցիչը հաշվի առնի յուրաքանչյուր աշակերտի հոգեկան և հուզական պատրաստվածությունը մասնակցելու այդ խաղին և կատարելու որոշակի դեր:

Կարծում եմ, աշակերտների ներգրավվածությունը բարձրացնելու և դասապրոցեսը առավելագույնս արդյհունավետ դարձնելու համար բավականին խելացի և արդիական կարող է դառնալ ուսումնառության համագործակցային մեթոդների կիրառումը, ինչպես, օրինակ, գործնական և դերային խաղը, կլոր սեղանի մեթոդը, մտագրոհը, քննարկումը, բանավեճը և այլն: Իմ կարծիքով, դա պայմանավորված է համագործակցային մեթոդների առավելություններով և դրական առանձնահատկություններով, որոնց թվում կարող ենք առանձնացնել հետևյալները.

- Այսպիսի մեթոդների կիրառմամբ անգամ ամենապասիվ աշակերտը ստիպված է լինում ակտիվանալ և իր մասնակցությունը ցուցաբերել քննարկմանը, ձևավորել և արտահայտել իր կարծիքը որևէ խնդրի շուրջ;
- Աշակերտների ակտիվությունն այս դեպքում կրում է ոչ թե պարբերական, այլ կայուն և մշտական բնույթ, քանի որ ակտիվ մեթոդների կիրառման պարագայում շակերտները մնում են դասի ակտիվ և ներգրավված մասնակիցները ամբողջ դասի ընթացքում, յլ ոչ թե դրա առանձին հատվածներում միայն;
- Աշակերտները ավելի շատ աշխատում են ինքնուրույն, մասնակցում են թիմային աշխատանքի և ազատ փոխազդեցության մեջ են գտնվում ուսուցչի և միմյանց հետ, ինչը նպաստում է նրանց մոտ ստեղծագործական և հետազոտական աշխատանքների կարողությունների ձևավորմանը և զարգացմանը:
- Ինքստինքյան և բնական կերպով ձևավորվում են աշակերտների հաղորդակցական կարողությունները, քանի որ աշակերտները պետք է ոչ միայն աշխատեն թիմում, այլև կարողանան ազատ արտահայտել սեփական տեսակետները, պաշտպանել դրանք բանավեճի ընթացքում:

Կարծում եմ, ուսումնառության համագործակցային մեթոդների կիրառման փորձը առավելագույնս արդյունավետ և նպատակային դարձնելու համար ուսուցիչը դասապրոցեսում պետք է պահպանի հետևյալ կարևոր սկզբունքները.

- Բոլոր աշակերտները հավասար են միմյանց՝ անկախ իրենց ակտիվության մակարդակից և առաջադիմության ցուցանիշներից;
- Յուրաքանչյուր աշակերտ ունի ազատ արտահայտվելու իրավունք և առաջադրված խնդրի շուրջ կարող է ազատ և անկաշկանդ ներկայացնել իր կարծիքը;
- Բոլոր աշակերտները պետք է ներգրավված լինեն աշխատանքի մեջ;
- Ոչ մի աշակերտ չպետք է քննադատության կամ նախատանքի ենթարկվի, անգամ սխալ լինելու դեպքում;
- Դասի ժամանակ պետք է բարենպաստ միջավայր ձևավորվի այն աշակերտների համար, ովքեր առանձնանում են իրենց հոգեկան-հուզական հատկանիշներով, պասիվ են կամ գերակտիվ;
- Քննարկման ընթացքում անկանխատեսելի դժվարությունների դեպքում ուսուցիչը պետք է միջամտի և քննարկումը վերադարձնի իր բնականոն ընթացքին;
- Ուսուիչը կարող է ակտիվ կերպով օգտվել տարբեր տեխնիկական միջոցներից, որոնք առավել արդյունավետ կդարձնեն քննարկումը կամ թիմային աշխատանքը՝ սահիկաշարերից, ֆիլմերից, տեսահոլովակներից և այլն;
- Աշակերտների միջև հաղորդակցությունը քննարկման կամ թիմային աշխատանքի ընթացքում պետք է պահպանվեն ուսուցչի կողմից սահմանված կանոնները և պահանջները:

Այսպիսով, ուսումնառության համագործակցային մեթոդների կիրառմամբ դասավանդման ընթացքում հնարավոր է դառնում շատ ավելի արդյունավետ կերպով հասնել բազմաթիվ ուսումնական նպատակների և լուծել տարբեր խնդիրներ, ինչպես, օրինակ.

1. Աշակերտների մոտ դրական խթան և մոտիվացիա ձևավորել ուսման նկատմամբ,
2. Զարգացնել ինքնուրույն աշխատելու կարողությունները;

3. Աշակերտներին սովորեցնել հաղորդակցվել միմյանց հետ որևէ թեմայի շուրջ, առաջարկել կարծիքներ և մասնակցել բանավեճերի և քննարկումների, սեփական կարծիքը և տեսակետը ունենալ կարևոր խնդիրների շուրջ;
4. Խթանել աշակերտների ակտիվությունը, ուշադրությունը ստեղծագործականությունը և այլ կարևոր ճանաչողական-հուզական գործընթացներ, որոնք անհրաժեշտ են անձին ոչ միայն դպրոցում, այլ նաև ողջ հետագա գործունեության ընթացքում;
5. Հաղթահարել աշակերտների մոտ առկա ուսման հանդեպ վախը, որը շատ հաճախ պայմանավորված է լինում հոգե-հուզական ոլորտի բարդույթներով;
6. Ակտիվացնել և դասի մասնակից դարձնել նաև այն աշակերտներին, ովքեր առհասարակ չեն տարբերվում ակտիվությամբ և զուսպ են իրենց պահում դասերի ընթացքում:
7. Առավել կայուն և ամբողջական գիտելիքներ յուրացնել և դրանք լրամշակել ստեղծագործական կամ հետազոտական աշխատանքների ընթացքում;
8. Աշխատել թիմում, լինել թիմի անդամ և թիմային աշխատանքի ակտիվ մասնակից:

Իհարկե, յուրաքանչյուր ուսուցիչ իր առջև նպատակ է դնում երեխներին փոխանցել կիայուն գիտելիքներ իր առարկայի շրջանակներում, ինչպես նաև լուծել այլ ուսումնական խնդիրներ, որոնց մասին խոսեցինք վերևում: Եվ անկասկած, ուսումնառության ակտիվ մեթոդները կիրառելի են յուրաքանչյուր մասնագետի գործունեության ընթացքում:

Իմ մանկավարժական պրակտիկայում ևս ակտիվ կիրառություն ունեն այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են խմբային քննարկումները, բանավեճերի կազմակերպումը, կարծիքների փոխանակումը ուսումնասիրված խնդրի շուրջ, նաև խմբային և թիմային աշխատանքների կազմակերպումը և այլն: Եվ փորձը ցույց է տալիս, որ այս մեթոդները ունեն բավականին նկատելի դրական արդյունք և ազդեցություն աշակերտների ուսումնառության վրա:

Եզրակացություն

Այսպիսով, հետազոտական աշխատանքի ընթացքում՝ կապված աշակերտների ներգրավվածության և ակտիվության ապահովման տեսակետից՝ խմբերով աշխատանքի կազմակերպման արդյունավետության հետ, եկանք այն եզրակացության, որ, իրոք, այս մոտեցումը իր դրական ազդեցությունն է թողնում աշակերտների ուսումնական գործունեության արդյունքների վրա: Աշակերտների ներգրավվածությունն ապահովելու համար շատ կարևոր գործոն են հանդիսանում դասարանում ստեղծված հատուկ պայմանները, որոնց պարագայում աշակերտները պետք է կարողանան համագործակցել միմյանց հետ, հաղորդակցվել և միասնականություն ցուցաբերել՝ առավել բարձր արդյունքի հասնելու համար: Հաագործակցության մթնոլորտը, սակայն, չպետք է վերածվի անառողջ մրցակցության խմբերի կամ մեկ խմբի ներսում աշխատող աշակերտների միջև, քանի որ այս պարագայում աշակերտների ներգրավվածությունը և առհասարակ, հետաքրքրվածությունը դասով, կպակասի՝ ավելանալու փոխարեն:

Շատ կարևոր հանգամանք է նաև դասի ժամանակ տիրող էմոցիոնալ մթնոլորտը, բարյացակամ և ընկերական միջավայրի ձևավորումը, որը մեծ ազդեցությունն է թողնում աշակերտների ներգրավվածության մակարդակի վրա: Ինչպես նաև շատ կարևոր գործոն է աշակերտների անհատական հետաքրքրվածությունը և նախընտրությունները: Այս պարագայում տվյակլ աշակերտների ներգրավվածությունը դասին կբարձրանա այն պարագայում, երբ նրանք ընտրության հնարավորություն ունենան և կարողանան մասնակցել հենց այն խմբի աշխատանքներին, որը նրանց համար առավել հետաքրքիր և հոգեհարազատ է՝ ըստ ուսումնասիրության թեմայի և դրան համապատասխան առաջադրանքի:

Օգտագործված գրականության ցանկ

1. Խաչատրյան Ս.Գ. Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006
2. Խաչատրյան Ս.Գ. Աշակերտների ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքի ձևերը մայրենիի ժամերին /համագործակցային ուսուցում/, «Նախաշավիղ», 1. 2003, Երևան, «Տիգրան Մեծ
3. Հովհաննիսյան Գ., Զոհրաբյան Ա., Արնաուդյան Ա., Գրիգորյան Ք.,Դավթյան Մ., Օհանովա Ի., Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ,. 2004
4. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ.,Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան, «Անտարես» հրատ., 2006
5. Վարդումյան Ս., Ջաղինյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, «Նոյյան տապան» հրատ., 2005